Հայտարարվում է մրցույթ՝ «ՀՀ Արարատի մարզի Նոր Խարբերդի Մ. Ղազարյանի անվան հ.2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի <<Մաթեմատիկա>> առարկայից (20 դասաժամ), <<Կենսաբանություն>> առարկայից (8 դասաժամ), դասվար (16 դասաժամ) :

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1),

2) մեկ լուսանկար 3X4 չափսի,

3) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում՝ միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ),

4) անձը հաստատող փաստաթուղթ,

5) «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,

6) ինքնակենսագրություն (Ձև 5),

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

10) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ,

11) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում).

12) «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (առկայության դեպքում նաև՝ 2-րդ կետի) պահանջվող համապատասխան փաստաթուղթ.

13) «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող էմինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում՝ 2026 թվականի սեպտեմբերի 18-ից մինչև հոկտեմբերի 02-ը ներառյալ, ամեն օր ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2026 թ. հոկտեմբերի 07-ին՝ ժամը 14:00-ին, «ՀՀ Արարատի մարզի Նոր Խարբերդի Մ. Ղազարյանի անվան հ. 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ -ում: Հասցեն՝ Արարատի մարզ, գ. Նոր Խարբերդ, 1-ին փողոց 14 շենք:

Տեղեկությունների համար զանգահարել 093 056515 և 094 544645 հեռախոսահամարներով: